

ՀԱՎԵԼՎԱԾ

Ա. ԸՆՏՐՈՎԻ ՀԱՄԱԲԱՐՔԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ներկա աշխատության մեջ մենք հայտնեցինք այն միտքը, թե գիտականորեն երկրորդական կարգի նշանակություն ունեցող մի շարք երկերի համար կարելի է կամ պետք է կազմել ընտրովի քարտարաններ և համապարպատներ: Սակայն նկատեցինք, որ Ակադեմիայի քարտարանային բաժնի մասնագետների կարծիքով ընտրովի քարտարաններ կազմելը շատ աշխատատար գործ է և խլում է շատ երկար ժամանակ, որովհետև այդ գործը մեքենայացնել հնարավոր չէ: Նույն կարծիքն է տիրում նաև Լեզվի ինստիտուտում, ուր ընտրովի քարտագրության աշխատանքներ են կատարվում: Այդ աշխատանքի եղանակը հետևյալն է: Կարդացվում է հեղինակի երկը և այդ ընթացքում քարտի վրա է հանվում նրա մեջ պատահող ամեն մի ընտրելի բառ՝ համապատասխան նախադասության հետ միասին. և այդ աշխատանքը կատարվում է ձեռքով: Այս ձևով է, որ ողուններն իրենց 7 միլիոնանոց ընտրովի քարտարանը ստեղծելու համար տրամադրել են 80 տարի, իսկ վրացիներն իրենց ընտրովի քարտարանը, ընդամենը 2 միլիոնի սահմաններում, ստեղծել են 40 տարվա ընթացքում: Ի հարկե՝ եթե այդպես է, պարզ է, որ յիսկատար քարտարաններ կազմելը շատ ավելի ձեռնառու կհամարվեր, քան ընտրովի քարտարաններ կազմելը. և այդպես էլ՝ քարտարանային բաժինը չունի ընտրովի քարտարաններ կազմելու ծրագիր:

Սակայն խնդրի ուշադիր ուսումնասիրությունը մեզ բերեց այն համոզման, թե լիովին հնարավոր է մեքենայացնել նաև ընտրովի քարտարաններ կազմելու գործը:

Ընտրովի քարտագրության համար կկատարվեն հետևյալ գործողությունները.

1. Համաբարբառի ենթարկվող գրքի վրա մասնագետի կողմից կընդգրծվեն բոլոր ընտրելի բառերը (ոչ նախադասությունները):

2. Եթե էջի վրա կա 1 ընդգծված բառ, 1 օրինակ կմեքենագրվի այդ բառը պարունակող հատվածը: Թերթի ճակատին կնշանակվի տվյալ բառը և թերթը կդառնա նրա քարտը:

3. Եթե էջի վրա կան մեկից ավելի ընդգծված բառեր, այդ էջը նույն քանակությամբ կբազմացվի գրամեքենայով (մինչև 4 օրինակ լինելու դեպքում) և կամ գլատիպ մեքենայով (4 օրինակից ավելի լինելու դեպքում): Ասենք, թե էջի վրա գտնվող 250 բառերից ընդգծված են միայն 3 հատը և կամ 11 հատը. կնշանակի՝ այդ էջը կբազմացվի 8 և կամ 11 անգամ:

4. Բազմացված օրինակներից յուրաքանչյուրի ճակատին կգրվի ընտրված բառերից մեկը և այդ օրինակը կդառնա տվյալ բառի քարտը:

5. Բազմացված բառաքարտերը կկտրատվեն և նրանցից ամեն մեկի վրա կթողնվի բնագրից միայն այնքան մաս, որը տվյալ բառին է պատկանում մտքի քերականական ամբողջության ստումով:

6. Բառաքարտերը կենթարկվեն այբբենական դասավորման և դրանով պատրաստ կլինի ընտրովի քարտարանը:

7. Պատրաստի այդ քարտարանի հիման վրա կկազմվեն քերականական և բնագրային ընտրովի համաքարքառներ:

Այսպիսի մեքենայացված միջոցով ստացված արդյունքների հետ ոչ մի դեպքում չի կարող համեմատվել ձեռքով կատարվող աշխատանքը՝ արագության իմաստով:

Ի դեպ՝ ասենք, որ ընտրովի քերականական կազմելը բարդություններ չի ներկայացնում, որովհետև լոկ բառերի քերականական ձևերի ընտրության հետ է կապված, բայց ընտրովի բնագրային կազմելը շատ դժվար գործ է, որովհետև կապված է ոչ թե բառի ձևերի, այլ նրա հետ առնչվող նախադասության պատմական նշանակության և բնագրային համեմատությունների համար ունեցած նպատակահարմարության հետ: Այդ պատճառով բնագրային ընտրովի համաքարքառ կազմելու գործը նախընտրելի է համեմատել ոչ թե լեզվաբանների, այլ բանասերների և պատմաբանների, որոնք գերծ կլինեն բառերի զուտ ձևաբանական երևույթներով տարվելու վտանգից, մի վտանգ, որը կարող է բնագրային լինելու սահմանված համաքարքառը հեռացնել նրա բնագրայնությունից և նպատակից:

Բնագրային ընտրովի համաքարքառները պիտի ընդգրկեն անխտիր բոլոր հատուկ անունները և գիտության տարբեր ճյուղերին պատկանող բազմազան տերմիններ՝ պատմական ու աշխարհագրական, քաղաքական, զինվորական ու ռազմական, հարկային, իրավագիտական, հնագիտական, ազգագրական, երկրագործական, արհեստագործական, սոսկության, ապրանքային, չափագիտական, կշռագիտական, դրամագիտական, հանքաբանական, բուսաբանական, կենդանաբանական, բժշկական, աստղաբաշխական (աստրոլոգիական), աստղագիտական (տիեզերագիտական) ու տոմարագիտական, արվեստաբանական (շինարարական-նարտարապետական, նկարչական-մանրանկարչական), գրականագիտական, մատենագիտական, գրչագրական (ձեռագրագիտական), իմաստասիրական, դիցաբանական, կրոնապատմական, դավանաբանական, մանկավարժական և այլն և այլն: